# ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

**Գիտությունը**, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո: Հիմք ընդունելով 2007 թվականի հուլիսի 11-ի ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները», 2014 թվականին ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն ոլորտում առկա հետևյալ առաջնահերթ խնդիրներին.

- գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը,
- գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը,
- գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը,
- գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծմանը,
- գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների հստակեցմանը,
- գիտության և կրթության ինտեգրման ապահովմանը,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման վերածմանը իրական դրամաշնորհային համակարգի,
- գիտական ներուժի վերարտադրությանը և երիտասարդացմանը,
- գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դուրսբերմանը ներքին և արտաքին շուկա:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումն ուղղորդվելու է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումը կիրականացվի.

- բազային,
- պայմանագրային (թեմատիկ) ,
- նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևերով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով գիտության բնագավառի ծախսերը կազմում են շուրջ **12,789.4** մլն դրամ:

Գիտության ծախսերն ամբողջովին արտացոլված են «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի NN 22-2, 22-3 աղյուսակներում:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ապարատի պահպանման համար նախատեսվել է **126.6** մլն դրամ՝ 2013 թվականի հաստատված բյուջեի **85.3** մլն դրամի դիմաց, կամ՝ աճը կազմում է 41.3 մլն դրամ (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատագրի մասում):

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով գիտատեխնիկական գործունեության համար նախատեսվել է շուրջ **12662.8** մլն դրամ՝ 2013 թվականի **11433.1** մլն դրամի դիմաց, կամ՝ **1229.6** մլն դրամով ավել, որը բաշխվելու է հետևյալ ուղղություններով.

- **<u>Բազային ֆինանսավորում</u>** ստացող կազմակերպությունների համար ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է **9,025.4** մլն դրամ՝ 2013 թվականի հաստատված բյուջեի **8,348.9** մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է **676.5** մլն դրամ: Այդ թվում՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 7,134.0 մլն դրամ՝ 2013 թվականի հաստատված բյուջեի 6,501.1 մլն դրամի դիմաց, կամ՝ <u>632.9</u> մլն դրամով ավել, որից 446.2 մլն դրամը հիմնականում պայմանավորված է միջին հաշվարկային աշխատավարձի 6.2 տոկոսի բարձրացմամբ՝ 73000 դրամ հաշվարկով՝ 2013 թվականի 68750 դրամի փոխարեն, 64.5 մլն դրամը՝ էլեկտրաէներգիայի ու գազի սակագնի աճով, իսկ 50.0 մլն դրամը կուղղվի «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի» գործունեությանն աջակցելուն, մնացած 72.2 մլն դրամը՝ 10 նոր ենթածրագրերին՝ ՀՀ ԳԱԱ «ՌԱՄԿ-ցանց Երևան (ICRANet)» կենտրոնի ստեղծումը, ԵՊՀ «Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծումը», ԵՊՀ «Թաղանթների ձևավորման գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծումը», ՀՃՊՀ «Էլեկտրամագնիսական համակարգերի բազային գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծումը», Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Արտակարգ իրավիճակներում սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման համակարգը», Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի գիտամանկավարժական և արժեքաբանական հիմունքները կրթական նոր հարացույցի պայմաններում», ՀՀ Կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ի «Կառավարչական գործունեության հոգեբանական գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծումը» և «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ստեղծումը», «Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ-ի «XX դարի ավանգարդ արվեստի ուսումնասիրման գիտական կենտրոնի ստեղծումը», միաժամանակ՝ ՀՀ առողջապահության նախարարության առաջարկով վերականգնվել է 2013թ. դադարեցված «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսավորումը:

- ՀՀ կառավարության 01.09.2011թ. N 1301-Ն որոշմամբ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է ՀՀ կրթության և գիտության

նախարարության կազմում հիմնադրամի և 2012 թվականից առանձնանալով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրից, ՀՀ պետական բյուջեի նախագծում ներկայացվում է առանձին՝ ««Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և ֆիզիկայի բնագավառում գիտական ներուժի արդիականացում» ծրագրով, 714.1 մլն դրամ գումարով՝ 2013 թվականի հաստատված բյուջեի 698.9 մլն դրամի դիմաց, և 15.2 մլն դրամ աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

- ՀՀ կառավարության 24.05.2012թ. N 675-Ն որոշմամբ ստեղծվել է «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամը և պետական կառավարման լիազոր մարմին է սահմանվել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեում առանձնանալով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերից, ներկայացվել է առանձին ծրագրով, որի համար 2014 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է 271.1 մլն դրամ՝ 2013 թվականի հաստատված բյուջեի 261.0 մլն դրամի դիմաց, և 10.1 մլն դրամ աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

- Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով նախատեսվել է 822.7 մլն դրամ, 2013 թվականի 774.4 մլն դրամի դիմաց: 48.3 մլն դրամի աճից 38.9 մլն դրամը պայմանավորված է ծրագրերում աշխատող գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի 8% աճով, իսկ 9.4 մլն դրամը՝ էլեկտրաէներգիայի ու գազի սակագնի ավելացմամբ:

- Գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով նախատեսվել է 72.7 մլն դրամ՝ 2013 թվականի 102.7 մլն դրամի դիմաց, այսինքն 30.0 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների, մագիստրանտների և դոկտորանտների և նրանց ղեկավարների միջին հաշվարկային թվի փոփոխությամբ:

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման գծով պահպանվել է 2013 թվականի մակարդակը, այսինքն 10.8 մլն դրամի չափով, որը կհատկացվի Սփյուռքի գաղթօջախների պատմության ուսումնասիրման, հետազոտությունների անցկացման նպատակով:

***<u>Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման</u>*** համար նախատեսվում է **1675.3** մլն դրամ՝ 2013 թվականին **1536.7** մլն դրամի դիմաց: **138.5** մլն դրամի աճը պայմանավորված է գիտական նպատակային-ծրագրային հետազոտությունների ընդլայնմամբ, որից 135.8 մլն դրամը ՀՀ ՊՆ պատվերով կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով միջոցների ավելացումն է, իսկ գիտության պետական կոմիտեի միջոցով կատարվող 13 ենթածրագրերից 9-ը՝ ընթացիկ տարում գործող ծրագրերի շարունակությունն են, 2-ը՝

կավարտվեն ընթացիկ տարում, իսկ 2-ը՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ-ի միջոցով 'Իրանաբնակ թյուրքախոս էթնիկական խմբերի ծագումնաբանությունը և ազգային ինքնության խնդիրները' /12.0 մլն դրամ/ և ՀՀ ԷԲՊՆ «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով «ՋՋԷՌ ռեակտորով ատոմային էներգաբլոկի ԳՇԿ-ում ակուստիկ տատանումների առաջացման երևույթի հետազոտման փորձարարական կայանքի ստեղծում» /10.0 մլն դրամ/, նոր միջոցառումներ են:

- **<u>Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման</u>** համար նախատեսվել է **1515.7** մլն դրամ՝ 2013 թվականի **1106.5** մլն դրամի դիմաց: **409.2** մլն դրամի աճը պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազո-տությունների ավելացմամբ, որից 277.2 մլն դրամը՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինան-սական պարտավորությունն է 2013 թ. մրցույթներում հաղթած թեմաների ֆինանսավորումը շարունակելու համար, մնացած 132.0 մլն դրամը՝ նախատեսվում է նոր մրցույթների համար:
- ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով, **<u>գիտաշխատողների գիտական աստիճանների</u>** համար հավելավճարներ տրամադրելու համար, նախատեսվել է **446.4** մլն դրամ՝ ընթացիկ տարվա **441.0** մլն դրամի դիմաց և **5.4** մլն դրամի աճը պայմանավորված է 2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցով իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճաններ ունեցող գիտաշխատողների փոփոխական թվով, իսկ ծախսերը հաշվարկվել են 770 գիտությունների դոկտորների և 2180 գիտությունների թեկնածուների հաշվով, պահպանելով հավելավճարների գործող չափերը, համապատասխանաբար՝ գիտության դոկտորների համար 20 հազ. դրամ, իսկ թեկնածուների համար՝ 10 հազ. դրամ:

Գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2012 թվական) փաստացի և ընթացիկ (2013 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համա-պատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերի ցանկը ներկայացված է սույն բացատրագրի N 7 հավելվածում: